## Նախաձեռնող խումբն առաջարկում է Կիպրոսի Մելքոնյան վարժարանի հիման վրա ստեղծել համահայկական դպրոց

//19.03.2010



1 / 1

AGBU «Այբ» ծրագիր

Երեւան/Մեդիամաքս/. Նախաձեռնող խումբը հանդես է եկել Կիպրոսի Մելքոնյան վարժարանի հիման վրա համահայկական դպրոցի ստեղծման առաջարկով:

Ինչպես այսօր Երեւանում կայացած մամուլի ասուլիսում հայտնել է նախաձեռնող խմբի անդամ, «Այբ» կրթական հիմնադրամի հոգաբարձուների խորհրդի նախագահ Տեր Մեսրոպ Արամյանը, համապատասխան առաջարկ է ուղղվել Հայկական բարեգործական ընդհանուր միությանը (AGBU), որին պատկանում են Մելքոնյան վարժարանի շենքն ու հողատարածքը:

Մեսրոպ Արամյանի խոսքերով, նախաձեռնող խմբի կազմում ընդգրկված են խոշոր հայ ձեռնարկատերեր Սփյուռքից, ովքեր պատրաստ են ֆինանսական միջոցներ ներդնել վարժարանի վերականգնման համար, ինչպես նաեւ լուրջ ուսումնական կազմակերպություններ, որոնք պատրաստ են մասնակցել համապատասխան ուսումնական ծրագրի մշակմանը:

Ներկայումս Մելքոնյան վարժարանի շենքում ժամանակավորապես տեղակայված է հունական դպրոց, սակայն AGBU-ն մտադիր է վաճառել շենքը:

Մեսրոպ Արամյանը նշել է, որ համահայկական դպրոցը պետք է ստեղծվի հետեւյալ սկզբունքների հիման վրա.

- դպրոցի կառավարումը պետք է կատարվի կրթության կառավարման ոլորտում փորձ ունեցող կազմակերպությունների կողմից;
- ուսուցումը պետք է ընթանա նոր կրթական տեխնոլոգիաների զարգացումը խթանող կրթության բարձրագույն չափանիշների վրա հիմնված ծրագրերի համաձայն;
- ուսուցչական կազմը պետք է ձեւավորվի ատեստավորման եւ որակավորման միջազգային չափանիշներին համաձայն;
- աշակերտների ընտրությունը պետք է կատարվի նրանց տաղանդի եւ մոտիվացիայի հիման վրա:

Նախաձեռնող խմբի ներկայացուցիչները հույս են հայտնել, որ AGBU-ի հետ բանակցությունների արդյունքում համաձայնություն ձեռք կբերվի:

Վերադառնալ

Դիտումների քանակը՝ (148)

### Կարդացեք նաև.

- «ՎիվաՍել-ՄՏՍ»-ի բաժանորդները կարող են 3G-ռոումինգի ծառայություններից օգտվել աշխարհի 48 երկրներում
- «Մեր բաժանորդների թիվն օրեցօր մեծանում է»,- ասել է Orange Armenia-ի գլխավոր տնօրենը
- Orange Armenia-ն եւ “Շեն”-ը Դաշտադեմում գործարկել են համակարգչային կենտրոն

ԳՈՎԱԶԴ

### Կարծիքներ

Անուն

Էլ. փոստ

Կարծիք

### EXECUTIVE Բլոգեր

Բոլոր բլոգերները



Իգոր Կլիմկո
“ԱրմենՏելի” գլխավոր տնօրեն

- Որակյալ ինտերնետից դեպի գիտելիքի վրա հիմնված տնտեսություն 3
- Բազմազանությունը հաջողության բանալին է 4
- Նպաստելով տեխնոլոգիական առաջընթացի ապահովմանը 57




### SMS Նախագծեր

ԿԻՆՈ ՍՊՈՐՏ ԱՎՏՈ ԱՇԽԱՏԱՆՔ ԲՈՐՍԱ

- Ես ծանոթացել եմ Օգտագործման պայմաններին

Մուտքագրէք պաշտպանիչ նկարին պատկերված թվերը

Գլխավոր | Կապ | Կայքի քարտեզ | Նախագծի մասին | Գովազդ

Բոլոր իրավունքները պաշտպանված են
© Copyright © 2003-2009 Mediamax
Ձևավորում և պատրաստում՝ SiteMax